

# ԽՄԵՆԲԱՆ

ՅԵՐԱՅՈՒՅԻ  
ՅՈՑՈՒՄՈՅՅ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ապրիլի 10 -ին. Թիֆլիս. № 15  
Շ Ն Ո Ր Հ Ա Ի Ո Ր Զ Ա Տ Ի Կ



—Կոտրենք այս ձուն, տեսնենք լաղ չէ՞:  
—Ձե՛ լաղ չէ, բայց մի բանի նման էլ չէ—հին երգն է,  
հին դատ—հին օսմին ու դարմանը—ազգային  
բարգնբը...մեր պատուհասները...





Բ Ա Ր Ի Լ ՈՒ Ե Վ Յ Յ Ե Յ Ե Յ  
III Յ Ո Յ Ե Մ Ո Ւ Մ Ո Յ Յ Յ

առաք կառավարիլ զամենաբարեբաշտ խմբագրատունն Սաթարալայի—և այս այն ժամանակի երբ զանազան խուրդք և ժանդախտք երեցաւ ի մէջ Մանջուրիայի իսկ զցուրտն բարձրացեալ կար մինչ 42 աստիճանի:

Աս այդ յայտնեմք ըզՔեզ զՄեր շնորհակալիս և օրհնեմք զՔեզ, զովեմք և փառաբանեմք և զթշնամեայ զաչքս հանեմք—եթէ հարկ իցէ առ այդ:

Բարձրացուցանեմք զՔեզ յերրորդ էտաժան, վասն արիաշանութեան Քոց:

III

ԳՊատելիին Մեր Շիրևանգադիի

Քրտնաշան աշխատութեանց քոյդ—մենք վկայ եղեալեմք և բարձր գնահատեմք՝ զէտաժս զչորս. ոսկայն զկարծիքն քո—խանդիսխան շատ անտեղի համարեմք, թէև՝ սիրեմք, և ի նկատի առնիմք, որ երեսուն տարի վասն ազգիս հայոց, բանն ու գործս թողեալ՝ զրիչ առեալ ես—վասնորոյ՝ շնորհեմք ձեզ զհարիւր հազար բուրլիս արծաթս հնչունս, եթէ կարիցես՝ վերցրու և հալալ լիցի բեզ: \*)

IV

Յովհանու Կսեղցուն (և ոչ Օձնեցուն և կամ Կարբեցուն)

Քանզի գիտիմք թէ՛ բանաստեղծք ոչ կարէն բինախինդ լինել, որպէս վարթապետք, ոչ կարեն դաւադիր լինել, որպէս եպիսկոպոսք, ուստի աղաչեմք զքեզ՝ սիրելիս մեր և հայոց ազգի պինդ մի պաչել շուրթս Համբարձում քաջամարտիկ զինուորին ու զբարիշիլ նրա հետ:—Կաթողիկոսական ընտրութիւնք մօտ են—լաւ չէ՛ եթէ խռովեալ լինիք. զկատարմանէ պատուիրեմք զեկուցել պ. Լէօի:

V

Սիրեցեալին մերոյ պ. Քալսեթարին

Կուլտուրական յետամնացութիւնք ազգին հայոց ի վաղուզ յետ է յայտնի է ամենեցուն, ուստի շնորհակալիքս Մեր յայտնեմք երբ խանդիսխան և ստէպ ստէպ, վասն զիւղացոց համար մտածէք. առաջարկեմք ձեզ, կազմել զէքսպեդիցիա և ուղարկել զգեղօրայքս,

\*) Վասն Քո խաթր պահէ պարոն Գասպար աղան և արդ ոչ գրէ:

որպէսզի հայ ան կով, ան ոչխար, ան հաւ ու ան հող գիւղացուն սովարացուցանին օգով ապրել զմածոն շինելն և զիւղատնտեսութեամբ պարապիլն:

Վասն քրտնաշան աշխատութեանց՝ բարձրացուցանիմք զքեզ տասնևչորսերորդ էտաժան:

VI

Թիֆլիսի Բաղսֆայից վարչութեան ծառայողաց

Լսեալ եմք թէ՛ դուք խիստ տանջւիք սիրուց և ցանկանք մտանել նորանոր ամուսնութիւն. մեք ընդդէմ չենք—եթէ կօնսիստորն էլ դէմ չէ:

Թոյլատրեմք. ով որչափ կին և ուզէ թող առնէ, և ով որչափ մարդս ցանկայ՝ ուզէ—մի բան որ՝ և մօղա է և յօգուտ բազմաշէնութեան քաղաքիս:

Թոյլատրիմք՝ բայց ոչ յօրինակ վարդապետաց մերոց:

ԱՆՊԱՇՏՏՕՆԱԿԱՆ

VII

Եպիսկոպոսի Սուրբասեանց Գործունէութիւնդ լաւ է, եթէ բոյ էլ ունենաս:

VII

Մասթոս վարդապետի (Սինօդական) Դեռ պատիկ իս ու էտինց լա, վուր մինձանաս՝ է ի՞նչ կրլինիս:

IX

Կարապետ եպիսկոպոսի Բոյդ բարձր ու չինարի, Ձենդ խոռոստ ու զինարի. Քանի փարայ՝ արժէք ունի—երբ. . . . .

X

Մեսալբ եպիսկոպոսին Երբ որ դատարկ բանի համար բարեկամներին նեղացնում են—այդ օրին են ընկնում:

XI

Խոռէն եպիսկոպոս (Մուրադբէգեանին) Հետինք առաջին և ընդհակառակ—Գործերդ կըտեսնեն՝ կրլինես տասունակ:

XII

Բագրատ վարդապետին Համեստ էիր, բայց մոռացար, էջմիածնում դու այլ դարձար: Ստորագրեց իրա սակութար աչ ձեռքով՝ Գասպար Կալասազով

Անդերձից յետոյ զէմուղէմ գնացի Մուկով—էս հէր օխնածի մոգոնած մաշինէն էլ հետտի էր վազում, կօսիս՝ գիտէր, վուր իս էլ իրա մէջն իմ:

Ճամփին խիլիմ քաղաքներ, խիլիմ գեղեր տեսայ: Լաւ աշխարքներ է էլի: Չուրս օրից հիդ ձլիւ (հաղել) հասայ Մոսկով: Հէյ զիւղի հա... տեսայ վաղկալում իմ բարեգմեքիս, «Սաթարալի կուսացկութեան Մոսկովի բուրոյի նաշախնիկին իրա պամոշինիկներով, աղուտանտներով, նասիլչիկներով ու բուրուր «հիտուրդներով»:

Վաղկէմէն նստեցինք Փայտօն ու թուշ գնացինք տուն:

Մոսկովը լաւ քաղաք է էլի. վուչինչ, խալխն էլ իստակ. դուրթ է միւր քաղքին չի հասնի, համա էլի վուչինչ—եօլա տանելու քաղաք է:

Աստու օխնած միւր կուսացկութէնի չլէնները, վուր իմացիլ էին թէ հասել իմ Մոսկով, էնչախնէթ էկել էին մօղս. Արէշովինց Վաստն էլ էնդի էր. սա էլ խիլիմ գօզրա է մյ, այ տղս, իղբալ ունէ՛ իս ու իմ հօքին. ասում էր՝

—Ձիմ գիղթում փսակւիմ թէ չէ, կօսէ:

—Իժում աղջիկ տեսիլ իս, ասի՛, Չէր մէ աղջկան տիս՝ իժում փսակւի. ասի:

—էս սնաթիս իրիք հարիր ու տասներկու աղջիկ—հարոնացուի անում ունիմ գրած կօսէ, էս դաւթրումս, (ու շանց տւեց կօան տակի դաւթարը) համա էն իմ ասում, վուր հիմի պսակը դաւիդարաբա է, կօսէ. աղջիկ տեսնում՝ հաւնում իս, համա չիս գիղում թէ ինչ հաւտի է, կօսէ. էտինց է Գասպար աղա, մոյ վինաւաթ, կօսէ. չունքի չիմ կանում իմանայ թէ էստի՛ վուչնց թէ կնիկարմասնեղը հայ մարթիքն էլ ինչ հաւտի ին, կօսէ, մօ համ ջօնջօլ ին ուտում, համ պէրօժնի, եղով շինած պիրօժնի ին անուշ անում, կօսէ, էստի ամենասակասէր ու թաւանկար մարթ, կօսէ, թէ կայ, կօսէ, մինը իս իմ, կօսէ, մինինը տէրտէրի տղայ Սանդրոն, կօսէ, վուր խալխի համա շատ է փիքը անում, կօսէ, ու էտու համա էլ լաւ ճաշիր է պատրաստում, կօսէ, ու մէկ էլ մէ Դերիշ կայ, թուրք չէ՛ հայ է, կօսէ:

—Մեր կուսացկութենի հալը վո՞ւնց է. ասի:

—Բայրաղը բանձր է կօսէ, իստակ իրա տիղը. համա, չունքի հիմի պարլամենտուրի ու մինիստրուլի կրիզիս է, կօսէ, բիրթումը մինձ խաբարնիր չկան, կօսէ:

—Պարլամենտուրին ո՞վ է ասի:

—Ղոսուդարասէնի Դումի ու Սովէտի բանիրը պարլամենտուրի է, կօսէ:

—Կրիզիսն ո՞վ է, ասի:

—Կրիզիսն էլ փաթերակն է, կօսէ:

—է՛ իմ գալը խօ էստի վուչինչ կապ չունի, ասի:

\*) Տես № 14.



—Ներդուրին, անձանօթ...  
 —Ոչինչ, ոչինչ—այսուհետև մենք ծանօթ կըլինենք—Այ ինձ ցաւ է պատճառում դիւրալի էլ դաննում է. դուք ինչպէս էք հաւանում սկէտին-գրիկը կամ իմ սլլալս...  
 —Ես... ես հրացած եմ. ես երջանիկ եմ; ես ձեզ պաշտում եմ—ես... սի...րում եմ...



— Գու գալը շնուղք է, կօսէ:  
 — Իս էտինց էլ գիդիմ ու կըհասկանամ, ասի, համա մինիստրները էտ բանի մէջ հաղուզ ին խառնուի, ասի:  
 — Ստօլիպինի խառնաթն է, կօսէ. հիմի ուրիշ թաւուր խաղ է ասում, կօսէ:  
 — Վճնց ասի, դանա նա միւր աշուղներին լաւ երթիր գիդիմ ասի:  
 — Պօլիտիկոսի խաղիմ— դիմիս, կօսէ:  
 — Հա իմացայ — պօլիտիկոսի խաղիմ լաւ. համա Վասօ ջան, ասի, ինչ կօսիս վուր, իս էտ մարթուն՝ Ստօլիպինին հաւնում իմ ասի, խիստ խիլունք մարթ է էրեւում աչքիս. ասի, այ թէ նրան կաթղկոս ջօզինք ինչ լաւ կուլի. ասի:  
 — Վուչիլինչ, իս էլ հաւնում իմ փիքրդ, կօսէ:  
 — Համա մէ ասէ, գէթաղաւայ ասի, էստի, էժանութիւն է թէ թանգութիւն:  
 — Ինչ տեսակ ապրանք գուղիս՝ կիսագին կու առնիս, կօսէ, սրանից էլ պակաս. — Իժում գիդիմ թէ դադում կուլի. կօսէ, այ մէ մտիկ տո՛ւ, էս բաղլի դուքնին, կօսէ, այ մէ մտիկ թէ՛ ինչ կայ, ինչ չկայ, կօսէ, թաղա խիւր, բուղք, գեղձ, նուր քաղած խաղող, շուր, բալի, ու էլ ինչ գուղիս, գուղիս ծախ կաթ, ճիւղնուլի (մրջին) իդ...  
 — Էս վուրդանց ին բերի, ասի, էս ցըրտին:  
 — Էստի ին հասցնում, կօսէ, պաղւնեւում բաղլի ունին, էլէկտրիչիսկի արեւիք ին մոգնում, բանիսի շիում, ու հաստի բաներ ին սարքում, հաստի բանիք անում, վուր քու հաւնածը, կօսէ, վուր քաղաք գնաս ու հիդդ վերցնիս էսդանցի խիւրնեւրից մէ էրկու հարիքը, ջուր էսդի հաստի գնով կու ծախիս՝ վուր համ ճամբու ծախքը դուս գայ, համ էլ մի բան կու մնայ դադում:  
 — Հիմի էլ բաղլութիւն անիմ, ասի:  
 — Վա, էստի Գինեբալովը բաղլութիւն է անում, ու լայիդ է, կօսէ, ու քիդ ինչ էլաւ, կօսէ, պարուն Գասպար:  
 — Ասի՛ տարեկան կանամ մէ երսուն միլիօն փուղ դադիմ, ասի:  
 — Աւել կանաս, կօսէ:  
 — Վճնց, ասի.  
 — Իրիթումը պտիս խաղայ, կօսէ.  
 — Սաղալ լաւ չիմ գիդի ասի, մէկ էս՝ ու մէկ էլ էն, վուր թէ էլի գուռնա— դուղուկ ըլի էտու ձէնի վրէն ուվրօ կանամ լաւ խաղայ ասի, ինչ թէ ասի՝ տրա-տրա տիտի դուլովի վրէն, ասի:  
 — Չէ պարուն Գասպար, դուք խօ չիք խաղայ, թղթի պիտի խաղացնիք կօսէ:  
 — Իս կոնչինից աւել ուրիշ խաղ չիմ գիդի ասի.  
 — Էտ թուղթը խօ չէ, ուրիշ թղթիք, նախաշուն նախշուն թղթիք, կօսէ:  
 — Էտունցեմէն խիստ շատ ունիմ. «Սաթարալի» հին նումերները փթերով ինք ծախում, կու բերիլ տամ ու բերի վրայ էնդդամ կու խաղցնիմ վուր խախը բեզրին. ասի:  
 Դուս էինք էկի քաղաքը ու բոլթա տալով

էս մասլահաթի վրայ էինք վուր մէբաշ գաղէթ ծախողները բղաւցին թէ վայնա սը-Կիտայիմ, կօսէ:  
 — Կիտայու հիդ վայնորա է սկսում, կօսէ:  
 — Իժում Ստօլիպինը դարու է, ասի. չէ, լաւ բան չէ է, ասի, էլի ցօցիալութիւն կու նընգնի, էլի...  
 — Ինչ անիս խառնաթի բան է, կօսէ:  
 — Մէ ասա իրան, վուր լաւ չէ, ասի, իմ մագիար ասա. ասի:  
 — Դուն ինքը խօսի հիդը, կօսէ, տիլիֆանով. պատական մարթ է, կօսէ:  
 — Վճնրդի է հիմի նա, ասի:  
 — Ինքը Պիտրերուխումն է ու դուն կի էստղանց կանաս խօսի, կօսէ:  
 — Էսդանց Պիտրէրուխ վունց ձէնս հասցնիմ, ասի:  
 — Ղայիմ բղաւի, կու հասնի, կօսէ:  
 — Սըա ջէր դուն դուս մի՛ճրի ասի, ու գնացինք տեղիփոնի մօտ— վերցրեց տեղիփոնը:  
 — Ատկուդա, կօսէ:  
 — Ցենտրալի. ձէն տից:  
 — Դայտէ Պիտրէրուխ:  
 — Պաղւնիլա ասեց. Վասօյի դիմը էկաւ:  
 — Բարիշնա ջան, սպասիքօ, կօսէ:  
 — Պիտրէրուխի ցիւտրալ, կօսէ:  
 — Դայտէ պօժօլուտա կաբինէտ Ստօլիպինա, կօսէ:  
 — Գատով ասում է:  
 — Մերսէ, կօսէ:  
 — Սո ու տիլիփոն, կօսէ:  
 — Գասպար Կալատուզով, Տիֆլիսի մօքայաք, գաւէչանի պիսալ ու սուգա պրիշօլ կօսէ, տէպէր ուսիլալ, շոտ վայնա սը Կիտայիմ հստ, կօսէ, պրօսիմ ատյաթիտ շայ դարձէ բուղիդ, բունդիք-մունդիք, ցօցիալութիւն բուղիդ, ձէն տեց Վասօն:  
 — Նէ բոյիսեա, ասում է, ձէն տից տեղիփոնը, նիշաւօ նի բոլիթ ասում է:  
 — Եսլի մինիստրսկի սաբոդնի միստ հստ, աղին միստ դաւայ Գասպար աղա Կալատուզովին կօսէ, խօսեց Վասօն:  
 — Սօչիտ, կօսէ, էլի ձէն տեց տեղիփոնը:  
 — Իժում վճնց, ասի, վրայ բերի իս— վօտ մօյ պրագրամ—  
 «Կաթի չալաւէկ բարոտայ. ուտրօժ ստաւայ, վեչրով սպի, պօլ դէն արէդ, նոչիու ուժին, չայ սվոյ վրեմիա, նիկակիլի բունդիք-մունդիք նի լուրու, գաղէթ չիտայ, «Սաթարալա» տրի բաղա չիտայ, ցերկով խաղի, պոմոլիմեա դլեա սերէ, դլեա վսէլս, կաղդա պոստ բուղէտ, պոստիտ նուժնո— կաղդա նէտ՝ նէ նուժնո— վոդկայ նէ պէյ ա վինօ կուշայ— իտօ կախէթ ինցիլի, դօշ, դուրդիէլ դա մոժնա:»  
 — Սօրոշ պրոգրամ կօսէ, էլի տեղիփոնիցը ձէնը լաւեց:  
 — Ժալովանեա տոժէ, նիչեօ նի սկաթու, սկիլիօ դա՞՞ վազմու, ասի:  
 — Սօրօշօ խօրօշօ, էլի ձէն լսեց:  
 — Վասօն ասեց, վուր բանը քութան աս

րած է, կօսէ, քիդ էքուց էքոր մինիտրներ թինի պօրտֆէլ կուտանի ջօշօ, յօշօ յօշօ:  
 — Պօրտֆէլս էլ ինչ է, ասի:  
 — Էն վուր թղթիք մղթիք ին դնում ագլակատները, կօսէ:  
 — Էտ խօ ստի տոպրակ է ասի, աժ ինձ ինչ, մասլարա իս գցում ասի:  
 — Վայ Գասպար ջան, էտ ինչ իս ասում, կօսէ, ու իժում շանց տեց մէ մինձ տուն, այ էս ժամհարովի դուքանիքն է ու բանկը, կօսէ:  
 — Լաւ տուն է ասի:  
 — Այ՛ էս էլ մէ մարթու մաղաղինն է, կօսէ, վից էտաթա է, կօսէ, ինչ գուղիս էս կինքի թէ արքայութիւնի համա էստի է, կօսէ. ա՛յ էս էլ Տրամբլէի դաւախանան է, կօսէ, հայիրը էստի ին դաւա խմում, կօսէ:  
 — Մինք էլ էստի պտինք խմի՛, ասի:  
 — Դուն մինիստրացու մարթ իս, էստի ինչ լայիդ է, կօսէ, ուրիշ տիդ գնանք, կօսէ:  
 — Հա, գէթաղայ ասի. ու գնացինք:  
 (Էլի կուլի)

Գասպար Կալատուզով



ԱՇԽԱՐԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԻՆ.

— Արայեան, որտեղ է գտնում Հայաստանը—  
 — Ընց այնտեղ, որտեղ նա առաջ գտընւում էր:  
 — Իսկ առաջ որտեղ էր գտնում:  
 — Այդ, պարոն ուսուցիչ, դուք, կարծեմ, աւելի լաւ կիմանաք, որովհետեւ ինձանից առաջ էք ծնւած:  
 — Մարութեան, դու ասա, որտեղ է գտնում Հայաստանը:  
 — Այնտեղ, որտեղ հայերը շուրհի մեր օգամբոց չինող ուրվիրանների՝ բնակչութեան ամենամանջան մասն են կաղմում:  
 — Թո՛ւ, ինչեք էք դուրս տալիս... Տէրեան, դու ասա:  
 — Պարոն ուսուցիչ, իմ կարծիքով, Հայաստանը պէտքէ երկրազնդիս վրա լինի:  
 — Նրա ո՞ր մասում:  
 — Ամեն մասերում:  
 — Ինչպէ՞ս...  
 — Եթէ ամեն մի հայ գաղթական իր ցնցոտիները խորհրում մէկ ֆունտ փողի փոխադրած լինի՝ Հայաստանում կանգնաչափ հող մնացած չիլինիլ:

Լիլիպուտի



# Ք Ր Ի Ս Տ Ո Ս Յ Ա Ր Ե Ա Ի

Ամեն տարի Քրիստոս յարեալ  
Միշտ տօնում ես, սև համար,  
Միթէ դրանով պակասում են  
Խեղճի ցաւերն անհամար:

Միթէ մի օր կատարելիս  
Քարոզները Տէր-Մարգու,  
Սիրել ընկեր ու թշնամուն  
Ինչպէս ա՛ճող կըսիրես դ՛ու...

Գոնէ հատիկ մի պատուիրան  
Կատարել ես բո կեանքում,  
Զէ որ դարձեալ խեղճին տանջում  
Հալածում ես, կեղեքում:

Քսան դար է, Քրիստոս յարեալ  
Դարձեալ արիւնն է հոսում,  
Ճշմարտութեան փոխարէն  
Կոպիտ ուժը միշտ խօսում,

Ե՛րբ ես սիրել արգարութիւն  
Նրա խաչին բեռնած,  
Դաղափարի ազատութիւն  
Ասուած-Մարգու շերմ սիրած:

Նա բարձրացաւ մահու խաչը  
Խեղճի համար տառապեց,

Իսկ բիրտ մարդը հին օրինի  
Իր տաճարում սարսափեց:

Նա տապալեց հին տաճարը  
Իսկ դու նորը շինեցիր,  
Հողով դարձեալ նոյն գազանը  
Մինչև այսօր մնացիր:


Իսկ տօնում ես Քրիստոս յարեալ  
Հարեանիդ միշտ խաբուում,  
Խեղճը դարձեալ բոբիկ քաղցած  
Խաւարումն է խարխափում:

Տանջում են նրան, խլում հացը  
Ոտնահարում մեռնողին,  
Յծի մարդիքն էլ խեղդում  
Ճշմարտութիւն սիրողին:

Վիրաւորած վագրի նման  
Եղբօր միւր յօշոտում,  
Ուժիդ առաջ բազկատարած  
Դարձեալ տկարն է աղթում:

Ապրում, խնդում նրա հաշիւն  
Արեան ծովում լող տալիս,  
Միշտ առնով արցունք, տանջանք  
Ի ու ծիծաղում, նա՛ լալիս...

Արգաւ Պապագոս



## Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

### Ն Ա Մ Ը Կ Հ Ո Ս Հ Ո Ս Ը Պ Օ Լ Ի Յ

Մեծնապատիւ կիկիչի Մ արտարին

Կլէկչի Մարքար աղա!

Հոսոսուպօլիմէին շատ ու շատ բարոյներ  
քիզ, բու կնգան, վուրթկերանց, աղպտե-  
բանց, քեւրտիքանց, զիզէզիզ ու ուրիշ  
հարցանողաց. ամէն:

Կու արմասս թէ էս սիլ է, վուրդղանց  
լուս ննգաւ մէբաշ Հոսոսուպօլիմէն, համա  
արմընալու վուչինչ չունիս, չունքի «Սա-  
թաբալէն», աշխրբիս չուրս կողմն էլ գնում  
է ու քու ուստութիւնը ամէն աթմորթի էլ  
իմանում է:

Ճնարիկ-մնարիկ վարդապետի համա քու  
ցերէմոնիէքով գրած պատուական նամակը  
կարթացի, բանից դուրս է գալիս, վուր  
գու կլէկչութենիմէն սաւայի պօլիտիկուրի  
գուրձքերէմէն էլ իս հասկանում...

Ուստա Մարքար քու կլէկչութիւնը խիստ  
իմ հաւնի, արմնում իմ թէ քիզ պէս ուս-

տէն ինչի՞ մէնակ միր կապաղի խալիս,  
պզնծներն է կլէկում, էդթաւուր թթու ազ-  
գասիրութեմէն ձեռք վիկալ, գանա հայը  
մենակ կաւկաղում կան, էստի չկայ...

Փառք Ասծու էնդգամ կարթալ գրել գի-  
ղիս վուր, ճնարիկ-Մնարիկ վարթապետը  
քիզ ուղեցիլ է Վանքի շիօլի ուստաբաշին  
շինի, թէ վուր էտինց է մի քիշ էլ էս կու-  
րը մտիկ արան, փուզ իս ուզում աշխատի...  
էստի շատ կան կլէկիլու ամաններ, հունարդ  
բանացրու մէկ մէկ կլէկի, օրէնը մէկը վուր  
կլէկիս 27 տարւայ կլէկիլու գուրձ կունե-  
նաս. թէ գուզիս փողրաթով կու տամ...

Թէ գուր դժւարանում իս էտղանցիմէն  
էստի ամանները կլէկիլու, մաշ խնթիք եմ  
անում քիզ, վուր թէ կարաս գաօջնի կլէկ-  
չութիւն սովրացրու ինձ, քանի վուր տես-  
նում իմ քու փէշակղ շատ ձեռնուտ է...

Մինձ ումիկ ունիմ վուր թէ ջէր բիձա  
Գասպարը քաղրումը չէ՛

Էլի կուլի  
Ալի-գուլի  
Ջէր շատ կուլի  
Գիթ Կակուլին»

Իմ էս զիրս քիզ շուտ կու հանի, վուր

## Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն Դ Ա Ս Ի Ն

Ուսուց.—Արեւեան, ինչ էս գրողը յայտնուր:  
Աշակ.—Առարկայի անունն է:

Ուսուց.—Տնօր մի քանի առարկայի ա-  
նուն:

Աշակ.—Էշ, վարժապետ, խող, քանանայ,  
արջ, գնդապետ, ուղտ, դերասան, ագուաւ,  
վիպասան, կապիկ, բանաստեղծ, աղէս,  
խմբադիր...

Ուսուց.—Բաւական է. ասան մի քանի  
մտաւոր առարկաներ:

Աշակ.—Չօռ, ցաւ, ժանտախտ, խօլերայ,  
սիֆիլիս, քէն, ռիս, նախանձ, մատնութիւն,  
դաւաճանութիւն, մարդորսութիւն, դրամա-  
շարթութիւն, կուսակցութիւն, խայտառա-  
կութիւն, կոբի, վէճ, ծեծ, շանտաժ:

Ուսուց.—Եղեան, դու աստ, ինչ է դե-  
րանունը:

Աշակ.—Այն բաները որոնք գործ են ան-  
ում առարկաների տեղ, կոչում են դերա-  
նուն:

Ուսուց.—Օրինակ:

Աշակ.—Աղախին, ծառայ, կառավարիչ,  
տեղակալ, փոխանորդ, «Էիւն» և «վէվ»:

Ուսուց.—Խելօք, ինչէր ես դուրս տալիս.  
դրանք բոլորն էլ գոյական անուններ են...

Աշակ.—Պարոն ուսուցիչ, իմ բերած օրի-  
նակները ժամանակակից դերանուններ են  
և յշանակում են «աղախին»—«էիւն» «ծա-  
ռայ»—«այր» «կառավարիչ»—«տէր», «տե-  
ղակալ»—«կաթողիկոս», «փոխանորդ», «ա-  
ռաջնորդ», «Էիւն» և «վէվ»—«ու»:

Ուսուց.—Վարդանեանց, ինչ է քայլը.

Աշակ.—Բայը ցոյց է տալիս առարկայի  
գործողութիւնը:

Ուսուց.—Օրինակ:

Ինձ չուստ ջուղաք տաս մի քանի պօլիտի-  
կուրի գուրձքերիմէն, վուր ներքոյստորա-  
գրեալ գրում իմ:

1. Գեօղալ Աղաբաշին մէնակ միխի է,  
նրան բօմագ-պամօշնիկներ ինչի՞ չիս նըշ-  
նում «Նրուսաղէմի իրիք վարդապետները»:

2. Կա խասիաթ չիս ունեցի, ուզում իս  
զիփ քու բարեկիցներին աղաք գցիս, ինչ  
կօսիս վուր շաթիքներից մէկն էլ էսղանցի  
Ենօք-Շահէնին անինք, վուր Պետրուզ Ա-  
գամովի տրոստին ունէ ու գլուխ ծակելու  
մինձ ուստա է. դա ուփրո պէտքական կու-  
լի քանց քու սանահէրներն ու քաւորները:

3. Երւանդ, մերտնդ, Փարմասօն կակոյ  
ու մակոյ որ թողնիս ու Լէօին, Առաքլովին  
ու կամպանիին վուր եպիսկոպոսներ շինիս  
ի՞նչ դարար կունենաս ասկայիս գուրձքերի  
մօնօպօլիէն դրանց ձեռքումը չի՞, վուր ու-  
նենան քու պլանները զիփ մօշլա կօսին:

4. Խնդրում իմ ինձ հասկացնես թէ էդ  
մինձ գրող Յ. Գլէնջովը, վուր «Մշակ»-ումը  
գրում է յիփ է լուս նընդի, ինչի՞ մինձ  
գրող է ու էդ էն Գլէնջովը է վուր «զրթի-  
րը» սիրում է...

Գիղիմ գլխացաւանք իմ տալի, մագրամ



Աշակ.—Հանդիպել, ծանօթանալ, այցելել, սիրահարել, համբուրել, նշանել, պսակել, գրկել, քնել, վիճել, կուել, ծեծել, բաժանել:

Ուսուց.—Ասլանեան, Բնչ է շաղկապը:

Աշակ.—Շաղկապը մի բառ է, որ կապում է իրար հետ նախագաստութիւնները և նրանց մասերը:

Ուսուց.—Օրինակ:

Աշակ.—Նշանդրէք, պսակ, համբոյր, գլբ-կախառնութիւն,


Ուսուց.—Ո՞րտեղ... Քարտաշեան, դու ասա, Բնչ է միջարկութիւնը:

Աշակ.—Մեր հին և նոր բանաստեղծների ամենագործածական բառերը:

Ուսուց.—Օրինակ:

Աշակ.—Ախ, վախ, ճի, հէյ, ճյ, վո՛ւյ, ճ, սևֆ, աւանդ, եղճեկ, ախոս:

Հիլիպուտի



Է Ն Յ Ի Կ Լ Ո Պ Ե Դ Ի Ա

Այսօրանից լոյս կը տեսնի «Սաթարալայի» մէջ մաս-մաս իմ 15 տարեայ ընթացքում կազմած գիտական-փիլիսոփայական-էնցիկլոպէդիկական բառարանը, որը հատով գնողներին մուրթա է տրուում 10-ից պակաս գնողներին՝ անփոխ, իսկ գումարով պահանջողներին՝ ձրի:

Այսպիսի գներ նշանակել ենք, ի նկատի առնելով այն միակ միջոցը, որի միջոցով կարելի է հայի մէջ զարգացնել ընթերցանութեան և գիրք գնելու սէրը:

Ուրեմն սկսենք Ա տառից:

Ա

Ազապ—Մի գրութիւն, որին փափագում են ամուսնացածները:

Ազատ—Միջոց, որով կանայք թալակներ են սարքում տղամարդկանց գլխներին:

կանամ նազէյիցա ըլլիմ, վուր իմ խնթիրքս կու կատարիս, ուրիշ վուրստ էլ դու բան կու խնթրիս իս կու կատարիմ, էսէնց է աշխրքի օրէնքը:

Թէ էսզանցի գուրծքերիմէն հարցնիս փառք Ասմու սալամաթութիւն է, ինչ վուր է կուսացկութիւնները բարիչեցան ու «համերաշխութիւն» սարքեցին հիմի իսկի լազաթ չկայ, ու թէ աղաք գուրծքիւր կրիայի պէս ին գնում, հիմի կի բակի դայգի ին ման գալի:

Պտրտեցին, պտրտեցին ու տեղակալ գրին պատրիարքին մագիար, կու գրիքնաս, Մանկունի սրփազանին, մինձ գուրծքերի վրայ ջիբ ինչկլի էսօր վիզիտէք է անում, խիստ է սիրում կարեստով ման գալ, ազգային գուրծքերն էլ մինձ յոյս ունէ, վուր իրփ պատրիարք դառնայ էնչախը աղաք գցի:

Շուտով միբ դաթար տւած ասկային պարլամենտը կու բացել, ջէր-ջէրօրթի, նուր պատգամաւորների ընդբութիւններով ին զանիտ խալիսը ..

Մի լաւ կլէկչի էլ հարկաւոր է միբ էս-

Ազար—Հիւանդութիւն է, որով վարակուած է հայ կեանքը:

Արովեան—Հայ գրող է, որի արձանը կուլտուրական միութիւնը կանգնացնելու է Յիսուսի 1 ըդ գալստեան 4-րդ օրը:

Աբլարուզա—Միջատ է, որ թակարդով որսում է միջատներ այնպէս, ինչպէս որ «Ընկերի» առաջարկած ֆիրմաները:

Ապտակ—Երես կարմրացնող դեղ: Ամօթ—Մի բան, որից զուրկ են անամօթները:

Ադր—Ձիբիլ, որ «Մշակը» անում է «Ադրիբի» մէջ:

Ադ—Անայի մարդկանց ուղեղի դեղ:

Ատամ—Սպիտակ իր, որ աւելի շուտ է ջարդուում մուշտակովի ժամանակ:

Ադա—Անդարդ մարդիկ:

Ապուր—գիւղացու սուպը:

Ապահարզան—Մի միջոց, որ բաժանում է կօնսիստօրիաներում՝ ընտանեկան խոզութիւններին վերջ պնելու համար: Գինը մի գլուխ շաքար:

Ափուակ—Ասում է այնպիսի մարդկանց որոնց ուղեղի մէջ կարմիր քամի է մտած:

Աղքատ—Առաջ է եկած աղիք բառից և կոչում են այնպիսի մարդիկ, որոնց աղիքները փչացած են լինում շատ բիվշտէկքս ուտելուց:

Աղօթք—Մահամբձ մարդկանց կտակի նախաբանը, որ կազմուած է աղից և օթից:

Ապելցին—Բօմբաձև իր, որի տեսքից հահարուսաները սարսափում են, իսկ համից հիանում:

Աքանդազ—Ձիբիլ դէն անելու գործիք, որի կարիքը աւելի զգացում է մի քանի խմբագրամաներում:

Աքացի—Քաղաքավարութեան մի ձև է, որ գործ է ածում հայերիս մէջ օգտակար

դանցի պատրիարքարանի ու ասկային պարլամենտի համա...

Մնամ վուր մէ ժուզ դեներլութիւն էիր ստացի, էտ ինչ էլաւ աստաֆկայ իս տւթ, թէ պանդուրի արին, վուր էլ չիս գրում քու անունի աղաքը «Ժներալ» խօսկը:

Աստուձ հոքին լուսաւորէ Պետրուզ Սիմօնովին... հա, ինչպէս է, զօջալ է ջէր Հաջի Համբարցումը, իս գրան աւելի յարմարիմ դատում կաթողիկոսութեան համար, քանց քու ձանտրիկ-Մանտրիկ վարթապետը:

Դրուստ է, ձանտրիկ-Մանտրիկ վարթապետը լաւ քարոզիւր է խօսում, քանց կուսանանց Տէր Արսէնը, մագրամ Առաքելովի քարոզներն էլ իր բամբակի թաւուր փափուկ ձէնով, պակաս չին նրամէն ու թէ ասկի լուսաւորութեն իք ուզում ու «Լուսաւորչական էգեղեցու վերանորոգութիւն», էտ կաթողիկոսը էտ կամպանիէմէն, վուր ջօգիք աւելի լաւ կուլի...

Ախպէր Բնչ գուրծ ունիս, որ խնդրում իս թէ մէ դուքան էլ քիզ համա բաց անին վեհարանի կուղբը... որտեղ նստած իս տեղգ

գործողների համար իբրև վարձատրութիւն Ամիս—Տարեայ մի որոշ ժամանակ չքը լրանալիս ամսուէրերը բուռն են քորում իսկ կենողները՝ գլուխները:

Ամառ—Տարեայ մի որոշ ժամանակ, երբ դաչուր կանանց արշաւանքների պատճառով տղամարդկանց գրպանները ջիբիդի ասպարէզ են դառնում:

Ալիւր—Սպիտակ փոշի, որ գործ են ածում մագմագեղները և մագամները կաւալներերի հետ Գալաւինսկու գրոսներու ժամանակ:

Աւետիս—Դպրոցների նախահաշի մուտքի մի յօդաձը:

Ազաւ—Գեղեցիկ թուշուն, հրաշալի ձայնով և գրաւիչ շարժւածքներով, նման այն դերասաններին, որոնք բեմի վրայ օր-օր են ասում և քնացնում հանդիսականներին:

էնցիկլոպէդիստ Փարեմուզ (Կըշարունակի)



Դասանանութիւն

—Դուք լսեցիք, որ Համբարձում Առաքելանը «Հորիզոն»-ը գնել է:

—Է՞հ, դուք այնպիսի սուտէք ասում, որ սատան... Իէ, երգեցէք, որ նա արել է այդ բանը...

—Ազնիւ խօսք եմ, ասում գնել է... ամբողջ երկու համար միասին... ինձ էլ «Մշակ»-ի խմբագրատան ծառան ասաւ:

Քաղաքավարութիւն

—Չարմանալի է, պ. Միքայէլ, դուք այնպէս անքաղաքավարի էք խօսում, կարծես թէ ինտելիգենտ շրջանում չլինէք, այլ մի ինչոր հայ թերթի էջերում:

Ժանգըր կաց, էջմիածին գնացողներմէն, թվ է խեր տեհի, որ գուն իս ուզում տեհնի...

Մէկ էլ տեհար քու կլէկչութեան հունարը տեհան ու մի գիշեր վի կալան քիզ ու սուս ու փուս Ներսէսի լիճը գցեցին, ինչի իս գլուխտ ցաւացնում, վուրդի վուր իս շատ լաւ է, թէ կարաս հեռուէմէն կլէկէ նրանց դիփունացը...

Գիզ օրինակ Տմբլաչի Սաշանը, իփ հեռու էր նրանցիմէն լաւ մարթ էր, իփ վուր բեսար արաւ ընդաւ նրանց մէջը, խիղճ մարթուն բէարուտ արին ու քիչ մնաց պաւլմէն էլ գցին...

Մաշ... էջմիածնի հայերը (օղը) էտթաւուր է, գրա համա էլ ձանտրէն Մանտրէկին վուր խնդրիլ իս, չուստ խուսկը յիդ առ. քանի վուր ուշ չէ ..

էլ Բնչ ասիմ, կլէկչի Մարքար. իս շատ լաւ իմ, քեզ ուզում իմ լաւ ըլլիս ու քու կլէկչութիւնը չթալիս:

Մնամ համաշա խաթարալիստ՝ Ժան Պալիչ

ԳԵՐՄԱՐԳԸ ԵՒ ՄՈՒԿԸ

Մարդը նստած մտածում էր.

«Ես ամեն ինչ եմ. ես ամենակարող եմ. ես կենդանական աշխարհի թագն ու պսակն եմ»:

Չնայած որ այս մտքերը շատ անգամ էին զբաղեցրել նրան, բայց նա չէր յոգնում այդ ուղղութեամբ մտածելուց և նոյնիսկ շատ անգամ այդպիսի դրութիւնը նրան զցում էր մոռացութեան աշխարհը, և նա գո՛ւ սրտով էր սթափուում իր երազներին:

Այս անգամ ևս նա երեակայական աշխարհում էր սաւառնում և նրա մաքրի ընթացքը մոտաւորապէս, հետեւեալն էր.

«Ձին ամենախելացի կենդանին է. բայց ինչ համեմատութիւն նրա և մարդու մէջ: Մարդը նրան տասնեակ դարեր առաջ է իրեն հպատակեցրել և այժմ էլ նա մարդու ձորան է: Ասում են նա շատ արագավազ է, արագ է վազում քան ջայլեամբ, բայց ի՞նչ ջայլամ, ի՞նչ ձի կարող է իմ հետ համեմատել, երբ ես նստած եմ հեծանւի վրայ: Առիւծը ճախրում է այնպիսի բարձրունքներում, ուր միւս թռչունները չեն կարողացել բարձրանալ իրենց սկզբնաւորութեան օրին. բայց ի՞նչ են նրանք բոլորը, արծիւն էլ հետները վերցրած՝ երբ ես նստած մօնօպլան ճախրում եմ եօթներորդ երկնքում:

«Օձը շատ վարպետօրէն սողում է: Ծիւծանդ, միտայն ծիծախ կարող են յարուցանել այդ խօսքերը: Ի՞նչ է նա՝ գովարար\* և նրամանների հետ համեմատում:

«Առիւծը ուժեղ է. փիղը, ուրնգեղջիւրը, գետածին նոյնպէս, բայց ի՞նչ են նրանք ներկայ տեխնիկայի ձեռքի տակ եղած գնաքերի դիմաց:

«Պողը ազան, շատակեր ու ամենակեր կենդանին է: Բայց մի՞թէ կարելի է մոռացութեան տալ խողից գերազանցողներին՝ մատակարարներին, տնտեսական մասնաժողովների նախագահին և անդամներին:

«Վայրենիները սիրում են ոսկին, նրա փայլը: Ո՞րքան կատարելագործւած վայրենի է մեզանից ամեն մէկը, քանի որ ոսկին և արծաթն են կազմում մեր գոյութեան հիմքը...»:

Նա դեռ շատ հեռու կը գնար, եթէ յանկարծակի սրտի անկանոն գործնէութեան հետևանքը՝ յօրանջելը չսթափեցնէր նրան:

«Այո, մարդը ամենագոր է: «Ես գերմարդն եմ՝ քանի որ, ամեն ինչ իմ մէջ կայ»:

Գերմարդ խօսքը արտասանելիս՝ նա ինքնագո՛ւ կերպով ժպտաց և անցաւ ննջարան: Ուղեղին այնքան զօւ էր տեղ, որ այլևս նա ընդունակ չէր մտածելու և հենց որ աչքերը փակեց, խելոյն ընկաւ Մորփեոսի գիրկը:

Այժմ ուղեղը մարդուց անկախ էր գործում և նա (մարդը) մէկ մարդը մէկ վա-

զում էր արագավազ ձիու նման, մէկ ճախրում էր արծեից բարձր, մերթ կոտորում տասնեակներով՝ փիղ, առիւծ, ուրնգեղջիւր, մերթ սողում դէպ լաւ ոտճիկ: Մի քիչ անց, նա պսակած թագով կանգնած էր մի բարձունքի վրայ և կարգի էր կանչում բոլոր կենդանիներին:

Կենդանիները լռելային կատարում էին նրա բոլոր հրամանները:

Յանկարծ, այդ ամբողջ ժխորի մէջ, նա նկատեց մկանը, որը շնորհիւ սահմանադրութեան, ազատ վազվզում էր այս և այն կողմ:

Գերմարդը ուզեց մի քիչ կատակ անել մկան հետ և գոռաց. «Հէ՛յ մուկ» ուղում էր վերջացնել. «Ինձ մօտ եկ», վեր ցատկեց տեղից, ինքը իր ձայնից դիւահարւած:

Ինչ որ մանր ոտներ փախուստ տւին և ամեն ինչ լռեց:

Գերմարդը ուշքի եկաւ. նա հառաչեց. «Ա՛խ, ափսոս որ երազ էր»:

Տրտեց աչքերը, դարձաւ միւս կողմին և աչքերը նորից փակեց: Մի քանի րոպէից ետ, երբ քունը արդէն վրայ էր եկել, դարձեալ վեր ցատկեց:

Լսեց նոյն ոտիկների ձայները և արիւց լուռ թիւն:

Այս անգամ գերմարդը չարացաւ: Մոռացաւ և՛ սահմանադրութիւն, և՛ ազատութիւն, և՛ կամքի բռնութիւն, ու որոշեց պատժել իրեն անհանգստացնողներին:

Չկացաւ թէ քնած է, այն նպատակով, որ իմանայ որտեղից է ձայն և ի՞նչպէս սրտալ թշնամուն:

Մի քիչ անց սկսեց թշնամու արշաւանքը: Մէկը կռծում էր ինչ որ բան: «Հա՛, նա արկում է» որոշեց գերմարդը. զգուշութեամբ վերկացաւ, կամացուկ վառեց լապտերը, մօտեցաւ արկղին և ամենայն հանգստութեամբ բացեց այն:


Օ՛ հիասթափութիւն, այնտեղ ոչոք չկար: Կրակը հանգրեց և պառկեց: Մի քիչ անց նոյն պատմութիւնը և այդպէս շարունակ մինչև լոյս: Բարկութիւնը և զայրոյթը իրենց գագաթնակէտին էին հասել:

Ակամայից գերմարդը տրւում էր մտածումներին:

Երկար ու բարակ մտածելուց յետոյ, նա որոշեց.

«Այո, մարդը ամենակարող է. բայց շատ դէպքերում ու մի շարք բաներում դեռ ևս խիստ անկարող»:

Հիպիթիկ



ԿԵԹՈՂԻԿՈՍԵԿՆ ԶՆՏՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՆՆԵՐ

Լուսահոգի Մատթէոս II-ի մահւան առթիւ էջմիածնոյ հայրապետական գահը նորից թափուր մնաց, և այժմս հարց է ծագում մի արժանաւոր և ըստ ամենայնի «հայ ազգի և եկեղեցու զաւակ» մինին ընտրել լուսաւորչեան գահի համար, Հայ ազգի բոլոր գրեւ իմացողները կարծիքները է որ յայտնում են այդ առթիւ. նրա՞ք ասում են, որ մեզ կաթողիկոս անհրաժեշտ է, որ մեր կաթողիկոսը կարող է լինել և աշխարհական և հոգևորական և սև ու սպիտակ հոգևորական:

Չորս տարի առաջ առաջին անգամ «Ութթաբալան» կարիք և ցանկութիւն յայտնեց աշխարհականներից մինին՝ պատուելի Ստեփանոս Մամիկոնեանին ընտրել կաթողիկոս, որովհետև նրա մէջ և այն ժամանակ, և հիմի էլ մենք գտնում ենք շատ արժանիքներ. այժմս այդ հարցը այնչափ հասունացաւ, որ Բաթումցի Մեղաւորեանը նոյնիսկ օրէնքների համաձայն համոզում է զրա կարելիութիւնը:

Մենք շատ ուրախ ենք, որ մտքերը հասունանում են, եւ, որ մարդիկ մտածում են— Թէ անկարելի բան չկայ աշխարհիս երեսին:

Սակայն, այնչափ էլ այդ այդպէս լինի, որչափ էլ աշխարհականի ընտրութիւնը դէմ չլինի եկեղեցու ոգուն և նոյնիսկ օրէնքներին, մենք այնուամենայնիւ գալիս ենք այն համոզման, որ աշխարհականն էլ ինչ տեսակ առաւելութիւններ ունենայ, նա չի կարող բան շինել մեղանում, քանի որ մեզանից ամեն մէկս և կաթողիկոս է իրան երեակայում, և պատրիարք, և Հռովմայ պապ:

Եւ որ այդ այդպէս է, այդ էլ նրա պատճառով է, որովհետև տղամարդիկը միշտ ոտնաձգողն իրար:

Մի եպիսկոպոս որչափ էլ լաւ և օրինապահ մարդ լինի, բայց և հակառակ է միւս եպիսկոպոսի արածների վերաբերեալ, իսկ պատրիարքը բնօրս է կաթողիկոսի դէմ— որովհետև իրենից մեծ է վերջինս:

Եւ այս աեսակ հազար ու մի բաներ, Հազար ու մի տեսակ խաղեր.

Դաւեր— Դաւիդարարաներ—

Եւ վերջն էլ դրամաներ ու վողկիւններ: Համաձայնելով բաթումցի փաստաբան պ. Մեղաւորեանի պատճառաբանութիւններից ամենագլխաւորի հետ, որ ասում է թէ «հայ լուսաւորչական եկեղեցու ամեն մի զաւակ իրաւունք ունէ կաթողիկոսանալու: այլ և զաւանելով հաւասարութեան սկզբունքները, հաւատարիմ մնալով հանդերձ մեր եկեղեցու ոգուն և աւանդութիւններին, ու միշտ բարձր գնահատելով այն առաքինութիւնները՝ եկեղեցին պայծառացնելու վերաբերեալ հարցերում, որ ունեն կանայք առ հասարակ, կրկին—այլև՝ ունենալով, որ


\*) Գովար-ժողովրդական բառ է, որ ընտրուում է կեղծող և սոցապող մարդկանց:



Գրիմադուհա «Մուռ Հայելի» Թատերա բեմի:

(չարժ)

ՃԱՆԱԳԱՐ ՀՈՐԴՆԵՐ



—Նրանք գնացին չոր խմելու, իսկ թնչի ուշացան:  
—Այնանից նրանք յագեցնում են, շուտով կըզան:

Խրիմեան Հայրիկն էլ 1906 թւի մայիս յու- նիսին կոնդակներով թոյլատրեց մասնակցել կանանց ու մեր ազգային-եկեղեցական- համայնական գործերին, և որովհետեւ կա- թողիկոսութիւնը շատերը ոչ թէ կոչում այլ պաշտօն են հռչակում, ձեւ պարոն Ար- դարեանս առաջարկում եմ կաթողիկոսու- թեան պաշտօնի համար ընտրել կնիկ մար- դուն:

Եւ իրաւ... բայց այդ իրաւների մասին հետեւեալ անգամ:

Կանոնիկոս Արդարեան



Գարուն

—Ո՛հ, որքան քնքոյշ է գարնան այս տատանուղ օդը... Իսկապէս որ գարուն է... Դուք պ. Գարեգին ինչպէս էք զգում այդ բոլորը .

—Է՛հ, գրողը տանի դրան .

—Ի՞նչի համար:

—Նրա համար՝ որ, հենց այդ գարնան գալու պատճառով ինձ երեքհարիւր բուբուռ տուգանքի ենթարկեցին, բակում եղած աղ- քի համար:

Պատասխան

—Էյ, կառապան. էս ի՞նչ է, քո ձիերդ բոլորովին չեն վազում...

—Ի՞նչ, բաս որպէս կողէիք լինէր .. ձեր քսան կողէի համար ձիերիս սպանեմ, ի՞նչ է:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Շահ-Աբբասի ժամանակներից ի վեր, գանձակեցիքը միշտ ցանկացել են սեփական թատրոնի շէնք շինել, բայց հէնց որ ուղե- ցել են իրենց ցանկութիւնը ի կատար ա- ծել՝ արգելքի են հանդիպել, ամենագոր փողի կողմից:

Յղած մի փոքրիկ գումարն էլ, անցեալ հոգաբարձուների շինարարական տաղան- գի» շնորհիւ, փչացել է, շինութեան հիմ- քերը մի քանի անգամ «քանդելու» և քան- դածը «նորից լցնելու» մէջ, ու մի քանի

օգուտ տւող խանութները հիմնայտակ կործանելու մը...

Երբ սրանք տեսնում են, որ էլ փող չունեն, ոչ շինութիւնը շինելու, և ոչ քա- ղաքի կենտրոնում եղած լայնաբերան փո- սը վերջնականապէս լցնելու, որ մեր ժո- ղովրդի էստէտիքական ճաշակը չփչանայ, խղճահարութիւնից դրդւած իրենք են մըտ- նում փոսի մէջ, որ գոնէ, իրենց ձեռքով քանդածը լցնել իրենց դիակներով:

Տարոյս սկզբներում մի խումբ բարա- կափոր հարուստներ դիմելով մեր նորընտիր հոգաբարձութեանը խոստանում են նիւթա- կան ամենալայն աջակցութիւնը ցոյց տալ, եթէ վերջինքս կըսկսեն թատրոնի շինու- թիւնը շինել:

Հոգաբարձութիւնը հաւատալով մեր հաստատութիւնի աւած խոստումներին ձեռ- նարկում է շինութիւնը սկսել, և դեռ «նո- վաբէշական» մասը էլ, կայալով տալիս է, «յայտնի» հասարակական գործիչ Բարսեղ Ապօրը, որը անմիջապէս սկսում է շինու- թեան հիմքերը փորել, միաժամանակ հա- նելով այնտեղից նա և նախկին հոգաբար- ձուների հոտած դիակները...

Երբ դիմում են յիշեալ հարուստներին իրենց խոստումը կատարելու նրանք հե- տեւալ պատասխանը են տալիս.

—Պարոնայք հոգաբարձուներ, ի վաղուց- անախ, տրադիցիօրէն, մենք սովոր ենք ժո- ղովրդի օգտին կտակ կամ նւիրատուութիւն- ներ անել, միմիայն մահւան բողբէն. (Այ- սինքն Գարբիէլ քեռին մեր բլին չորած ժամանակ), ուստի ներկայումս անկարող ենք ձեր խնդիրքը կատարել...

—Ուրիշ ելք չկայ, պէտք է սպասէք...

—Շատ փող «դիզելու» համար մենք, իւ- րաքանչիւր օր կենքում համաձայն առա- ծի՝ ժողովրդից «եզը գողանում ենք» այն պայմանով միայն, որ մեր մահւան ժամա- նակ, «Եզան ոտն ու գլուխը» բաժանենք ժողովրդի աղքատներին...

Եւ ճշմարիտն ասած, ներկայ «հասարա- կական պայմանների» կողմից, դա, մի, «Պատուաւոր» միջոց է ընդունւած, փութե- րով ժողովրդից գողացածը, մախալներով իրան յետ տալու տեսակէտից...

—Դրանով մենք բարեկործի հռչակ վա- յելով հանդերձ՝ թէ երկրում ապրող տըխ- մարների աչքերին ենք թող փչում, և թէ իսկական խելօքներին խարում:

—Յայտ առնելով զայս ամենն ի գիտու- թիւն պատուարժան հոգաբարձութեանը, հայցում ենք ի զգուշութիւն ձեր և այն, որ եթէ կարողացաք մեզ մի հրաշքով մեղցնել, ու դնել դազաղի մէջ, օրմիտ-օրմիտ սխալ- ւէք ու տէրտէրների (կաշառք) օգտին. սրտներին վրայ խաչահամբայրի համար փող դնէք, որ նրանք մեզ լաւ ճանապարհ ձգեն...

Որովհետեւ մենք պատկանում ենք ան- մահ «Կօլտէր»-ի ասած մարդկանց այն տիպին «որոնց ափի մէջ՝ դազաղում քնած ժամանակ եթէ շըխշըխան ոտկի դնէք իս- կոյն կըվերակենդանանան»...

—Այն ժամանակ հարձակոյն իրաւացա- նական կողէքսի կտակը կըբանդէի և շինու- թիւնը կըմնայ կիսատ...


Այժմ հոգաբարձութիւնը փողի սաստիկ պէտք ունի, իսկ հարուստները հէջ մտադիր չեն կամաւոր գնալու էն «դունիէն», ուստի հոգաբարձութիւնը միացել է մեր սեւաշոր տէրտէրների հետ ու աւագ եկեղեցում բազ- կատարած «հսկում է» կատարում որ կարո- ղանայ նրանցից մի քանիսին էլ ա ուժով ճանապարհի...

Եթէ այդ չի յաջողի, նրանք մտադիր են, իրենց ցանկութիւնը (հարուստներին թա- փը թումբ ասել տալը) ի կատար ածել, մեր «տղերանց» սիրած մեղոթով (որ թարգ- մանի տէրօրի միջոցով):

Առ այժմ որոշւած է տէրօրի ենթարկել ջնուտ օղլիներ Օվանէսին և Սաչատուրին, Իլլան լարանց Ալիքին, Մալունց Սիմօնին, Մրուժունց Յակոբին, Չոփուռ Գրիգորին, Մամօ Վասակին Սահանց Համբարձումին Աբրահամին և Իվանին (եթէ խոստացածը չտան) և այլն:

Տէրօրիստներ վարձւած են՝ Պուլին Փա- փախչի գէտն Մղդսի և Վերդունց Կարապե- տը...

Գնդրբազի



ՍՈՒՐԱՆՆԵՐԿԻ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Կուլտուրա» տպարանի տէր՝ Լեինշտէյինը հակառակ իր և մեր մէջ եղած գրաւոր պայ- մանագրութեան, արգելքներ յարոյց և թոյլ չտեց «Սուրհանդակի» գրաշարներին բանել ապրելի 4-ից, երկուշաբթի օրւանից այն պայմաններով, որ մենք ունէինք նրա հետ կապած անցեալ 1909 թ. մարտի 8-ից՝ երեք տարի ժամանակով, և ոչ թէ միայն այս, այլ և հրատարակութեան թոյլտուութեան թղթերը չէր ուզում տալ, կամենալով ստի- պել մեզ, որ անմիջապէս նոր պայմաններ կապենք, վերջի վերջոյ, մի քանի օրից յետոյ նա ստիպւած եղաւ յիշեալ թղթերը յանձնել մեզ, որից յետոյ միայն մենք հնա- րօրութիւն ունեցանք ուրիշ տպարանի հետ նոր պայման կապելու:

Ահա այդ պատճառով մենք հնարաւորու- թիւն չունեցանք, հակառակ մեր յանկու- թեան, «Սուրհանդակ»-ի երեք № № հրա- տարակել ըստ սովորականին:

«Կուլտուրա» տպարանի տիրոջ այդ ապօ- րինի վարձուքի համար մենք դիմել ենք պատշաճաւոր իշխանութեան:

Խմբագրութիւն

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» ԽՄԲԱԳԻՐ

ՇՈՏ ԱՓՆԵՆՆԵՆԻՆ

Ձեր հարցի մասին պատասխան տալը թէև բոլորովին ձանձրացուցիչ պիտի լինի հայ ընթերցող հասարակութեան, բայց նրա ներողամտութիւնն ենք խնդրելու կանխապէս, որ պարտաւորւած ենք լրագրի էջերը մասնական խնդրով պարապեցնելու:

Մենք չենք լսել, թէ երգիծական թերթերը պարտաւորւած են իրենց նկարների համար բացատրութիւն տալու բացի ցէնզուրից: Երգիծական նկարն ինքը պիտի խօսի և տեսնողը իր ստացած տպաւորութեան համեմատ պիտի ըմբռնէ: Անշուշտ ամեն մարդ պիտի բացատրէ այն մտքով, ինչպէս որ թելադրում են իրեն մտապատկերները և խիղճը:

Մեր նկարը շատ մեկին է: այնտեղ ամեն բան խօսում է այնքան կենդանի, որ մենք մի քանի շնորհակալութիւն ենք ստացել: Հետևաբար ժողովրդի և ընթերցողի պահանջներն շարժամարելով չէինք կարող այնպիսի նկարներ տալ, որ չդժգոհէր որևէ գիւղատնտես:

Ահա վեց տարի է, որ 75,000 բուրբի կտակած է հանդուցեալ Դաւթեանը գիւղատնտեսական դպրոց բանալու. քայքայւած աշխատաւոր գիւղացին վաղուց սպասում է, բայց մինչև օրս դեռ չի մարմնացել գործը: Հետևաբար, դժգոհելու շատ անիթ ունի ժողովուրդը, որը կորցնում է աստիճանաբար իր հաւատը:

Հրատարակեց ժամհարեանի 250,000 բուրբու կտակը գիւղատնտեսական դպրոցի համար, բայց ամեն կողմից քաշքշուկներ եղան այդ գումարը փոխադրելու գէպի կովկասի համալսարան, կամ որևէ ուրիշ նպատակի: Պարզ է, որ թշուառ գիւղացին պիտի կորցնէր իր հաւատը, երբ նկատում էր, որ մեր ինտելիգենցիան ամենազխաւոր հոգսը փոխանակ գէպի գիւղատնտեսութեան ուղղելու, ձգտեց այդ նպատակին յատկացւած գումարը բուրժուազիայի և բիւրօկրատիայի զաւակների զարգացման գործին ծառայեցնել:

Մանաւանդ որ հայ գիւղացին վաղուց կորցրել է իր հաւատը, երբ տեսել է, թէ ինչպէս «գիւղացու քարեկամ» ճանաչւած մարդը նոյն գիւղացուն, սովատանջ աշխատաւորին օգնելու համար, որ նա գնայ Սիբիր աշխատանք գտնելու, որ սոված երեխաներին հաց հասցնէ, երկաթուղու վարչութիւնից ստանալիք ձրի տոմսակի համար, այդ գիւղացիներից արլակատի վարձ է պահանջում...

Ահա թէ ի՞նչ յարաբերութիւններ են աշխատաւոր ընչազուրկին ստիպել, որ նա «գիւղացուն սրտացաւ քարեկամներին» վերայ իր հայեացքը փոխէ և նրանց մասին ուրիշ հայեացք կանգնէ:

Ա. Երզնկա

Ժխած բանալի

—Ի՞նչ էք անում, պարոն, միթէ կարելի է դուր սիգարով բանալ...  
—Սիգարով... Տէր Աստուած... Ուրեմն սիգարի փոխարէն բանալին ծխել եմ...

Զեմ նանաշում


Մի հարբած մարդ գիշեր ժամանակ պատահում է մի անծանօթի և հարցնում է նրան.

—Պարոն, ասացէք խնդրում, այս լուսինն է թէ արևը:

Ներողութիւն, պատասխանում է անծանօթը, ես այս տեղացի չեմ, չեմ ճանանում... Գ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՆՆԵՑ

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ



Կոմպլեկտներ

ՇՔԵՂ ԿԱԶՄՈՎ

1906 թ. . . . . 5 ր.

1907 թ. . . . . 7 ր.

1908 թ. . . . . 7 ր.

1909 թ. . . . . 7 ր.

1910 թ. . . . . 7 ր.

Հին համարները հատով թիֆլիսում 10 կոպ., թիֆլիսից դուրս 12 .:

Դիմել՝ «Սաթարալա»-ի գրասենեակին:

Ա Ռ Ե Ի Տ Բ Ե Կ Ե Ն Տ Ո Ւ Ն

„ԸՆԿ. ԳՐԱՄՈՓՈՆՆ“

Գ. Ս. ԴԱԻԻԴՈՎ և ԸՆԿ.

Առաջարկում է աշխարհում եղած լաւ գրամօֆոններ և պլաստիկաներ իջեցրած գներով

ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ ԳԻՆԸ

Ա.Ռ.Ս.Ջ

Ա.Յ.ԴՄ

3 ր.

2 ր.

Ջաֆար, Մաշադի-Մահմեդ Բագրատա Մողժեղաթ սլամ Նիկոլա

3-2

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է

ՆԱՐ-ԴՈՍ

Պ Ա Յ Բ Ա Ր

Վ Է Պ

Գինն է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Մուրհանդակ»-ի խմբագրատանը, ուր և գիմում են գումարով գնողները:



Երբուցայում չոյն տեսակ են գարում. Աստիճանում պրակտիկը մեզ ցլցն է տակի, որ չմտն գէպըն-  
բում չոյնպէս է կենում—այստեղ երկու տարբեր կարծիքներ չլիւտին կնիքն. և ինչ բնում է, որ ցուգ պէտք  
է ինչ կնքն: